

Հաստատված է
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ կողմից
գործադիր տնօրեն՝ Լ. Ալթունյան

ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Օդային տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության սույն կանոնները (այսուհետև՝ տեքստում՝ կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի և ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերին համապատասխան:

Սույն կանոնները հանդիսանում են օդային տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և չեն հակասում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոններով «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ապահովագրական ընկերությունը (այսուհետև՝ Ապահովագրող) կնքում է օդային տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության պայմանագրեր հայկական և օտարերկրյա ֆիզիկական, իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների (այսուհետև՝ Ապահովադիրներ) հետ, որոնք հանդիսանում են օդանավերի սեփականատերեր և/կամ շահագործողներ:

1.2. Սույն կանոնների շրջանակներում օդային տրանսպորտային միջոցների (այսուհետև՝ օդանավեր) տակ հասկացվում են ուղևորատար և բեռնատար ինքնաթիռները և ուղղաթիռները, ինչպես նաև սավառնակները, դիրիժաբլները, դելտապլանները, օդապարիկները և այլ թռչող սարգավորումները:

1.3. Ապահովագրության պայմանագիրը կարող է նախատեսել երկու և ավելի օդանավերի ապահովագրում, այդ դեպքում սույն պայմանների դրույթները տարածվում են յուրաքանչյուր օդանավի վրա՝ առանձին վերցրած:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Սույն կանոնների համաձայն ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի այն ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են օդանավերի տիրապետման, տնօրինման կամ շահագործման հետ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

3.1. Սույն կանոններով կնքված ապահովագրության պայմանագրերում ապահովագրական պատահար են համարվում այն տեղի ունեցած

իրադարձությունները (բացառությամբ սույն պայմանների 3.8. և 3.10. կետերում թվարկված դեպքերի), որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում և հաստատված են համապատասխան իրավասություններ ունեցող մարմինների կողմից տրված փաստաթղթերով՝ օդանավի խորտակումը, անհայտ կորչելը, օդանավի կորուստը կամ վնասումը:

3.2. Ապահովագրողը պատասխանատվություն է կրում այն բոլոր ապահովագրական դեպքերով, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, բացառությամբ այն իրադարձությունների, որոնք նախատեսված են սույն պայմաններով և գործող օրենսդրությամբ:

3.3. Հիմնական ռիսկերից ապահովագրություն (the main risks covering)

Հիմնական ռիսկերից ապահովագրությունը նախատեսում է ապահովագրողի պատասխանատվությունը այն իրադարձություններով, որոնք կապված են օդանավի կողմից՝ օդանավի նշանակությանը համապատասխան ուղևորների, բեռների և փոստի փոխադրման համար թույլատրված երթուղիներով (թույլատրված տարածաշրջաններով) թռիչքների կատարման հետ, բացառությամբ այն թռիչքների, որոնք նշված են ստորև՝ 3.4. և 3.5. կետերում:

3.4. Լրացուցիչ ռիսկերից ապահովագրություն (the additional risks covering)

Լրացուցիչ ռիսկերից ապահովագրությունը նախատեսում է ապահովագրողի պատասխանատվությունը այն իրադարձություններով, որոնք կապված են օդանավի կողմից հատուկ ծրագրով թռիչքների կատարման հետ, այն է՝ փորձարկումներ, ռեկորդներ սահմանելու նպատակով թռիչքներ, ավիացիոն տեխնիկայի ցուցադրում, թռիչքային կազմի ուսուցում, պարեկություն, հրդեհների դեմ պայքար, օդանավից ինչ որ բան փոշիացնելը և այլ բարձր ռիսկ պարունակող թռիչքներ:

Լրացուցիչ ռիսկերից ապահովագրությունը իրականացվում է լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց:

Հիմնական և լրացուցիչ ռիսկերից ապահովագրությունը չի նախատեսում այն ռիսկերից ապահովագրությունը, որը բացառվում է.

ա) համաձայն «Պատերազմի, առևանգման և օղակնացության այլ վտանգների դեպքում ռիսկերի բացառման մասին» (կանոնադրություն AVN.48B, սույն կանոնների հավելված 1),

բ) համաձայն «Ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության ռիսկերի բացառման մասին» (կանոնադրություն AVN.38A, սույն կանոնների հավելված 2):

3.5. Հատուկ ռիսկերից ապահովագրություն (the particular risks covering)

Հատուկ ռիսկերից ապահովագրությունը նախատեսում են պատերազմի, առևանգման և օղակնացության այլ վտանգների ազդեցության (կանոնադրություն AVN.48B, սույն կանոնների հավելված 1) և ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության (կանոնադրություն AVN.38A, սույն կանոնների հավելված 2) ռիսկերից ապահովագրությունը, որոնք սույն կանոնների 3.3. և 3.4. կետերով հանվում են ապահովագրվող ռիսկերի թվից:

Հատուկ ռիսկերի ապահովագրությունը իրականացվում է լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց:

3.6. Կառուցվածքային և արտադրական թերությունների, անճանկազմի սխալների և այլ պատճառներով ուղղաթիռների, օդագնացային շարժիչների և գլխավոր փոխանցիչների, օդանավի մյուս ագրեգատների ներքին վնասվածքի դեպքերում վնասի ապահովագրությունը իրականացվում է ապահովագրության առանձին պայմաններով:

3.7. Օդանավի խորտակումը, անհայտ կորչելը կամ կորուստը որպես ապահովագրական դեպք ճանաչվում է երբ՝

3.7.1. կատարված իրադարձության հետևանքով օդանավը ֆիզիկապես կործանվել է և ամբողջությամբ ոչ պիտանի դարձնել թռիչքային շահագործման համար (լրիվ խորտակում), կամ երբ այդ օդանավի վթարային նորոգումը տեխնիկապես անհնար է կամ նորոգման համար ծախսերը տնտեսապես նպատակահարմար չեն և գերազանցում են ապահովագրական գումարը (կառուցվածքային խորտակում);

3.7.2. ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում իրականացված պլանային թռիչքից հետո օդանավը նշանակման սկզբնակետ չի ժամանել և նրա որոնման միջոցառումները 60 օրվա ընթացքում արդյունքներ չեն տվել կամ որոնումները պաշտոնապես դադարեցվել են վերոհիշյալ ժամկետից ավելի շուտ;

3.7.3. օդանավի կորուստն առաջացել է այդ օդանավի շահագործման համար դժվարանատչելի և ոչ պիտանի տեղանքի վրա հարկադրական վայրէջքի հետևանքով:

3.8. Համաձայն սույն կանոնների ապահովագրական պատահար չեն համարվում և այդ դեպքերով ապահովագրական հատուցում չի վճարվում.

3.8.1. օդանավի առանձին ագրեգատների փչացումը՝ կապված այդ ագրեգատների ցանկացած թերությունների և պաշարի սպառման հետ՝ մաշվածք, հնացում, ամրության նվազեցում, որը կապված է աշխատանքային գործընթացների և ուղեկցող գործոնների (թռթում, աղմուկ, էլեկտրամագնիսային խոչընդոտներ և այլն) հետ, եթե այդպիսի վնասվածքների և փչացումների հետևանքները տեղակայված են ագրեգատների ներսում;

3.8.2. օդանավի կառուցվածքի տարրերի վնասվածքներ՝ կապված նորմալ շահագործման պայմանների և ծանրաբեռնվածության ներգործության հետ, որոնք ունեն կուտակվող կամ ծավալվող (քայքայում, ճեղքվածքներ և շերտավորումներ) բնույթ;

3.8.3. շարժիչի կոմպրեսորի թիակների, արտաքին եզրակների տարրերի և օդանավի մյուս ագրեգատների տեղային վնասվածքներ (փոսվածքներ և խորշեր), եթե դրանք կապված չեն օդանավի հետ կոնկրետ գրանցված պատահարի հետ և բացահայտվել են հետթռիչքային զննման ժամանակ կամ օդանավի կարգավորիչ աշխատանքներ կատարելիս:

3.9. Շարժիչի գազաօդային ուղու մեջ կողմնակի առարկաներ ընկնելու պատճառով կոմպրեսորի թիակների վնասվածքը դիտվում է որպես ապահովագրական դեպք, եթե այդպիսի վնասվածքը հանդիսացել է թռիչքի ընթացքում շարժիչի գրանցված փչացման պատճառ:

3.10. Ապահովագրական հատուցում չի վճարվում, եթե պատահարը տեղի է ունեցել այն ժամանակաշրջանում, երբ օդանավը.

ա) օգտագործվում է օրենսդրությամբ արգելված նպատակներով կամ այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են պայմանագրում նշվածներից;

բ) գտնվում է այն աշխարհագրական սահմաններից դուրս, որոնք նշված են պայմանագրում, եթե դա թելադրված չէ օդանավի վթարով կամ անհաղթահարելի ուժի հանգամանքներով;

գ) գետնի վրա դեկավարվում կամ կառավարվում է դրա համար չլիազորված և/կամ դրա իրավունքը չունեցող անձանց կողմից;

դ) տեղափոխվում է ցանկացած տեսակի տրանսպորտով, բացառությամբ ապահովագրական դեպքի հետևանքով վնասվելուց հետո տեղափոխման;

ե) օդակայան կամ հերթատեղ թռիչք կամ վայրէջք է կատարում, որոնք չեն համապատասխանում օդանավի տվյալ տեսակի համար պահանջներին, եթե դա թելադրված չէ օդանավի վթարով կամ անհաղթահարելի ուժի հանգամանքներով;

զ) գերբեռնված է՝ ուղևորների ընդհանուր քանակը գերազանցում է տվյալ օդանավի համար ուղևորների առավելագույն քանակը, կամ խախտվել են բեռնավորման սահմանային նորմերը կամ օդանավի կենտրոնահարմարման կանոնները;

է) թռիչք է իրականացնում ակնհայտորեն անսարքին վիճակում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ թույլատրված է թռիչքների շահագործման ուղղեցույցով և համաձայնեցված է ապահովագրողի հետ:

3.11. Եթե սույն կանոնների 3.8.1., 3.8.2. և 3.8.3. ենթակետերում նշված պատճառների հետևանքով տեղի ունենա օդանավի խորտակում կամ հետևանքներն արտակարգ իրադրության պատճառ դառնան, որը կհանգեցնի օդանավի որևէ վնասվածքների, ապա այդպիսի իրադարձությունը դիտվում է որպես ապահովագրական դեպք:

3.12. Ապահովագրական պատահար չեն համարվում նաև այն բոլոր իրադարձությունները, որոնք գտնվում են ուղղակի կամ անուղղակի կապի մեջ ցանկացած տեսակի միկրոպրոցեստորներում և դրանց պարոնակող համակարգիչներում, ինչպես նաև այդ համակարգիչների ծրագրերում ամսաթվերի փոփոխման հետ, մասնավորապես 2000 թ. հունվարի 1-ի հետ: Նշված իրադարձություններով ապահովագրական հատուցում չի իրականացվում:

Չեն հատուցվում նաև այնպիսի վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի բխում են ցանկացած տեսակի միկրոպրոցեստորների և դրանց պարոնակող համակարգիչների, ինչպես նաև այդ համակարգիչների ծրագրերի տեստավորման հետ, եթե այդպիսի տեստավորումը կապված է 1999 թ. դեկտեմբերի 31-ից հետո ցանկացած ամսաթվի հետ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐ ԵՎ

ԴՐԱՆՑ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ապահովագրավճար է համարվում այն դրամական գումարը, որը ապահովադրի կողմից մուծվում է ապահովագրողին՝ վերջինիս կողմից ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունների դիմաց:

4.2. Ապահովագրավճարի չափը որոշվում է ապահովագրողի կողմից ինքնուրույն և կարող է դիֆերենցվել՝ ելնելով ապահովադրի կողմից ընտրված ապահովագրական պայմաններից՝ գործող սակագներից, պայմանագրի գործողության ժամկետներին և այլ գործոններին համապատասխան:

4.3. Ապահովագրավճարը ապահովադրի կողմից ենթակա է մուծման ամբողջությամբ կամ մաս-մաս՝ նախքան ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը, ընդ որում երկրորդ և հաջորդ ապահովագրավճարների մուծումները պետք է իրականացվեն համաձայն ապահովագրության պայմանագրում նշված ժամանակացույցի:

4.4. Ապահովադիրը պարտավոր է պահպանել նրա կողմից ապահովագրավճարների մուծումը հաստատող փաստաթղթերը և դրանք ներկայացնել ապահովագրողի պահանջով:

Եթե ապահովադրի հանձնարարությամբ ապահովագրավճարները մուծում է այլ անձ, ապա այդ կապակցությամբ վերոհիշյալ անձը ապահովագրության պայմանագրով որևէ իրավունք ձեռք չի բերում:

4.5. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում, ապահովագրողին վճարման ենթակա է ապահովագրավճարը այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում նա կրել է ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ապահովագրողը վերադարձնում է պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը մասհանելով գործավարման ծախսերը՝ ապահովագրավճարի 10 %-ի չափով: Ընդ որում՝

ա) ապահովադրի պահանջով ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում ապահովագրողը վերադարձնում է պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարները, մասհանելով կատարված ծախսերը, իսկ եթե ապահովադրի պահանջները պայմանավորված են ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանների խախտմամբ, ապա վերջինս ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները ամբողջությամբ:

բ) ապահովագրողի պահանջով ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարները ամբողջությամբ, իսկ եթե ապահովագրողի պահանջները պայմանավորված են ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագիրը չկատարելով, ապա նա ապահովադրին է վերադարձվում պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարները՝ մասհանելով կատարված ծախսերը:

զ) այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրով կատարվել է կան նախատեսվում է կատարել ապահովագրական հատուցում, ապա Ապահովադրի կողմից պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՖՐԱՆՇԻԶԱ

5.1. Ապահովագրական գումար է համարվում այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում ապահովագրության պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման համար:

Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ, սակայն չի կարող գերազանցել օդանավի շուկայական առժեքը:

5.2. Ֆրանշիզայի չափը (ապահովագրական հատուցումում Ապահովադրի անձնական մասնակցության չափը) ապահովագրության պայմանագրով սահմանվում է յուրաքանչյուր օդանավի համար, ընդ որում.

ա) վնասը, որը չի գերազանցում ֆրանշիզայի չափը չի հատուցվում;

բ) եթե ապահովագրողը հատուցումներ է կատարում մի քանի ապահովագրական դեպքերով, ապա ֆրանշիզան հանվում է յուրաքանչյուր դեպքով վնասի հատուցման գումարից;

գ) օդանավի խորտակման, անհայտ կորչելու, կորստի դեպքում ֆրանշիզան չի հանվում:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Ապահովագրական պայմանագիրը գրավոր համաձայնագիր է ապահովագրողի և ապահովադրի միջև, համաձայն որի ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման ժամանակ կատարել ապահովագրական հատուցում ապահովադրին, իսկ ապահովադիրը պարտավորվում է սահմանված ժամկետում մուծել ապահովագրավճարները:

6.2. Պայմանագիրը կնքվում է ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա, որը կազմվում է ապահովագրողի կողմից սահմանված ձևով և որտեղ, որպես հիմնական տեղեկություններ, պետք է նշվեն.

- ապահովադրի անուն, ազգանունը և հասցեն (եթե նա ֆիզիկական անձը է) կամ անվանումը և իրավաբանական հասցեն (եթե նա իրավաբանական անձը է);
- ապահովագրության համար նախատեսվող օդանավերի ցուցակը, նրանց նավակողի և գործարանային համարները, թողարկման տարին;
- շարժիչների համարները;

- թռիչքների բնույթը և օդանավերի շահագործման աշխարհագրական շրջանները;
- այլ պայմաններ, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի աստիճանը որոշելու համար:

6.3. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է կողմերի կողմից համաձայնեցված ցանկացած ժամկետով և վավերացվում է ապահովագրական վկայագրի հանձնումով, որը ստորագրում է ապահովագրողի կողմից, հաստատվում է կնիքով և ուղարկվում ապահովադիրին:

6.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում վկայագրում նշված օրվան համապատասխան, ապահովագրողի տեղական ժամանակով 00 ժամից, բայց ոչ շուտ քան ապահովադիրի կողմից ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի մուծման օրը, ընդ որում մուծման օր է համարվում ապահովագրավճարարի կամ դրա առաջին մասի ապահովագրողի հաշվարկային հաշիվ մուտք արվելու օրը:

Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է ապահովագրողի տեղական ժամանակով ապահովագրական վկայագրում նշված օրվա ժամը 24-ին:

6.5. Ապահովագրավճարը տարաժամկետումով վճարելիս հերթական ապահովագրավճարի ապահովագրողի հաշվին ապահովագրական պայմանագրով սահմանված օրը չմոծելու դեպքում, պայմանագրի գործողությունը այդ օրվանից կասեցվում է մինչև հերթական ապահովագրավճարի մուծման օրը: Վերը նշված օրվանից հետո 30 օրվա ընթացքում ապահովագրավճարի մուտք չարվելու դեպքում, ապահովագրողը կարող է միակողմանիորեն դադարեցնել ապահովագրության պայմանագրի գործողությունը:

6.6. Ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրության պայմանագիրը շարունակում է իր գործողությունը, սակայն վնասված կամ կործանված օդանավի վերաբերյալ ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման գումարի չափով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

7.1. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքում՝

ա) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կամ Ապահովագրողի կողմից սույն պայմանների և դրանց հիման վրա կնքված պայմանագրերի համաձայն իր պարտավորությունների լրիվ ծավալով կատարելուց հետո;

բ) ապահովադիրի կողմից ապահովագրավճարները պայմանագրով սահմանված ժամկետներում չմուծելու;

գ) իրավաբանական անձ հանդիսացող ապահովադիրի լուծարվելու, կամ ֆիզիկական անձ հանդիսացող ապահովադիրի մահանալու դեպքում, բացառությամբ ապահովագրության մասին օրենսդրությամբ և սույն պայմաններով նախատեսված դեպքերի;

- դ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովագրողի լուծարվելու դեպքում;
- ե) դատարանի կողմից ապահովագրության պայմանագրի անվավեր ճանաչելիս;
- զ) կողմերից որևէ մեկի պահանջով, ընդ որում այդ մասին գրավոր դիմումը պետք է մյուս կողմին ուղարկվի ոչ պակաս քան պայմանագրի լուծման ենթադրյալ օրվանից 30 օր առաջ:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը իրականացվում է ապահովադրի՝ ապահովագրական հատուցման մասին դիմումի և ապահովագրողի կողմից կազմված ապահովագրական ակտի (եզրակացության) հիման վրա:

8.2. Ապահովագրական հատուցմուն ստանալու մասին դիմումի հետ միասին ապահովադիրը պետք է ապահովագրողին ներկայացնի (քնօրինակները կամ վավերացված պատճենները) հետևյալ փաստաթղթերը.

ա) փաստաթղթերը, որոնք վերաբերվում են ապահովագրական դեպքի հանգամանքներին, նրա պատճառներին, վնասի չափերին (այդպիսի փաստաթղթեր կարող են լինել տեխնիկական զննման ակտեր, պետական հանձնաժողովների եզրակացություններ և այլն);

բ) փաստաթղթերը, որոնք հաստատում են ապահովադրի ապահովագրական շահի առկայությունը, այն է՝ օղանավի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող կամ այդ օղանավի խորտակման կամ վնասվելու դեպքում սեփականատիրոջ առաջ նրա պատասխանատվության չափը հաստատող փաստաթղթերը;

գ) օղանավի վնասվելու դեպքում՝ նորոգման պլանը և վթարային նորոգման համար ծախսերի նախահաշիվը;

դ) ապահովագրական պատահարին վերաբերվող այլ փաստաթղթեր, որոնք կպահանջի ապահովագրողը:

8.3. Ապահովագրական ակտը կազմվում և հաստատվում է հիմնավորման և ապահովագրական հատուցման չափերի հաշվարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջ լրակազմը ապահովագրողի մոտ ստացվելուց հետո 30 օրվա ընթացքում:

Եթե ապահովագրողը անց է կացնում ապահովագրական պատահարի սեփական հետաքննություն, ապա ապահովագրական ակտը կազմվում է այդպիսի հետաքննության ավարտից հետո, բայց ապահովադրից ապահովագրական դեպքի վերաբերյալ փաստաթղթերի լրակազմը ստանալուց հետո երեք ամսից ոչ ուշ:

8.4. Օղանավի նորոգման համար ապահովադրի ծախսերը ապահովագրողը հատուցում է այն ծավալով, որն անհրաժեշտ է օղանավի վերականգնման համար՝

այնպիսի տեխնիկական վիճակի և կոմպլեկտավորման բերելու, որը նա ուներ նախքան ապահովագրական դեպքի վրա հասնելը:

8.5. Այն դեպքում, եթե ապահովագրական գումարը փոքր է օդանավի արժեքից, ապահովադրի վնասը որոշվում է որպես փաստացի վնասի մաս՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնորեն:

Ընդ որում ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել այն չափը, որը սահմանված է «Օդանավի արժեքի մեջ ագրեգատների արժեքի տեսակարար կշիռների մասին» աղյուսակում (սույն պայմանների հավելված 3):

8.6. Եթե օդանավի խորտակման կամ անհայտ կորչելու դեպքում ապահովագրողը ապահովագրական հատուցումը վճարում է ապահովագրական գումարի քիվ չափով, ապա.

ա) ապահովագրողն իրավունք է ստանում՝ որպես փոխհատուցում, դառնալու վնասված կամ խորտակված օդանավի կամ նրա ցանկացած ագրեգատի սեփականատեր՝ բոլոր գրանցման և տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի հետ միասին;

բ) եթե ապահովագրողը որոշում չի ընդունում դառնալու վնասված օդանավի կամ ագրեգատների սեփականատեր, ապա ապահովադիրը իրավունք չունի միակողմանի հրաժարվելու վթարի ենթարկված օդանավից ի օգուտ ապահովագրողի և օդանավը այդ դեպքում մնում է ապահովադրի սեփականություն:

8.7. Ապահովագրական հատուցումը ապահովագրողը վճարում է ապահովագրական ակտը կազմելուց հետո 60 օրվա ընթացքում:

8.8. Այն դեպքում, երբ ապահովադիրը օդանավի ապահովագրության պայմանագրեր է կնքել մի քանի ապահովագրողների հետ, ապա ապահովագրողը հատուցումը կվճարի այն չափով, որը չի գերազանցում վնասի հատուցման ենթակա այն մասը, որը կազմում է նրա հետ կնքված ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումարը՝ այլ ապահովադրների կողմից կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերով ապահովագրության ընդհանուր գումարի նկատմամբ:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ԿԱՄՆՎԱԶԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊԶԵՐԸ

9.1. Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը այն դեպքերում, որոնք նշված են սույն պայմանների 3.8. և 3.10. կետերում, ինչպես նաև՝

ա) ապահովադրի՝ ապահովագրական դեպքի առաջացման ուղղված դիտավորյալ գործողությունների դեպքում;

բ) ապահովադրի կողմից հանցագործություն կատարելու դեպքում, որն ուղղիկ պատճառական կապի մեջ է գտնվում ապահովագրական պատահարի հետ;

զ) թռիչքային կամ տեխնիկական անձնակազմի կողմից թռիչքային շահագործման գծով ուղեցույցի կամ այլ փաստաթղթերի պահանջների կոպիտ խախտման դեպքում, եթե այդ խախտումը ապահովագրական դեպքի պատճառ է հանդիսացել;

դ) ապահովադրի կողմից ապահովագրողին ապահովագրության օբյեկտի և վնասի չափերի մասին ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելու դեպքում:

9.2. Եթե ապահովադիրը համապատասխան միջոցառումներ չի ձեռնարկել այն անձանց նկատմամբ ապահովագրողի պահանջի հետադարձ իրավունքների ապահովման համար, որոնք օրենսդրությանը համապատասխան ապահովագրողի կողմից հատուցվող ապահովադրի վնասների համար պատասխանատվություն են կրում, ապա ապահովադիրը գրկվում է ապահովագրական հատուցումն ստանալու իրավունքից այն մասով, որը հավասար է պահանջի այդպիսի իրավունքների չափին:

9.3. Եթե ապահովադիրը համապատասխան միջոցառումներ չի ձեռնարկել վնասված օդանավի կամ նրա ագրեգատների պահպանումն ապահովման նպատակով, որը հանգեցրել է վնասի ավելացմանը, ապա ապահովագրողը իրավունք ունի այդ լրացուցիչ վնասի գումարով նվազեցնելու ապահովագրական հատուցումը:

9.4. Եթե ի հայտ գան այնպիսի հանգամանքներ, որոնք ըստ օրենքի կամ սույն պայմանների գրկում են ապահովադրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից, ապա նա պարտավոր է ապահովագրողին վերադարձնել ստասած ապահովագրական հատուցման գումարը:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովադիրը իրավունք ունի.

- ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը հաստատող փաստաթղթերը,
- ծանոթանալ ապահովագրության պայմաններին,
- ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդների և գործակալների միջոցով,
- ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ստանալ ապահովագրական հատուցումը,
- վաղաժամկետ լուծարել ապահովագրության պայմանագիրը,
- ապահովագրական վկայագրի կորուստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը, որից հետո կորցրած վկայագիրը ճանաչվում է անվավեր և նրա հիման վրա հատուցումներ չեն կատարվում:

10.2. Ապահովադիրը պարտավոր է՝

- ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում մուծել ապահովագրավճարները,
- ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,
- պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, ապահովագրության օբյեկտին առնչվող համապատասխան անվտանգության նորմերը և կանոնները,
- ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում անհապառ հայտնել Ապահովագրողին ցանկացած տեսակի փոփոխությունների մասին, որոնք էականապես ազդում են ռիսկի աստիճանի վրա, այդ թվում նաև հայտնել Ապահովագրողի սեփականատերերի փոփոխման մասին կամ Ապահովագրողի անցնելը որևէ այլ կազմակերպության ֆինանսական հսկողության տակ, ինչպես նաև այլ համանման փոփոխությունների մասին,
- ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետներում ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի առաջացման մասին, ինչպես նաև ներկայացնել ապահովագրական դեպքի պատճառների և հանգամանքների վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,
- ապահովագրական պատահարների առաջացման դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ վնասների կանխելու կամ նվազեցնելու նպատակով,
- ապահովագրողին հնարավորություն տալ զննել և ուսումնասիրել պատահարի հետևանքով վնասված գույքը, փորձաքննություն կատարել վնասի առաջացման պատճառների և հետևանքների բացահայտման ուղղությամբ,
- հաղորդել ապահովագրողին ապահովագրական պատահարի հետ կապված իրավասու մարմինների գործողությունների մասին (հետաքննություն, դատական կանչ և այլն),
- առանց ապահովագրողի գրավոր համաձայնության չտալ խոստումներ և չանել առաջարկություններ կորստի կամ վնասի կամավոր հատուցման վերաբերյալ,
- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները ապահովագրողի հետագարձ իրավունքների ապահովման նպատակով այն անձանց նկատմամբ, որոնք օրենսդրությամբ համապատասխան պատասխանատվություն են կրում պատճառված վնասի համար:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի.

- ապահովագրողի հետ իր հարաբերությունները իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,
- վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
- ուսումնասիրել ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել իրավասու մարմիններին,

- ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ստուգել ապահովագրված նյութական արժեքների պահպանման վիճակը և թերությունների հայտնաբերման դեպքում պահանջել դրանց վերացումը՝ սահմանելով հիմնավոր ժամկետներ,
- միակողմանի վաղաժամկետ լուծել ապահովագրության պայմանագիրը ապահովադրի կողմից՝ օրենսդրությամբ կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված՝ իր պարտականությունները չկատարելու դեպքում:

10.4. Ապահովագրողը պարտավոր է՝

- ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին, ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,
- ապահովադրի պահանջով և օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխություններ կատարել ապահովագրության պայմանագրում, եթե նրա գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,
- ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովադրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել նրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն: Այն դեպքերում երբ, ապահովագրողը պետք է իրականացնի ապահովադրին ապահովագրական հատուցում, վերը նշված ժամկետը խախտելու համար ապահովագրողը վճարում է տույժ ապահովադրին, յուրաքանչյուր ուշացման օրվա համար հատուցման գումարի 0,001 % չափով,
- ապահովագրական գումարի սահմաններում ապահովադրին հատուցել այն ծախսերը, որոնք կատարվել են վնասների կանխման կամ նվազեցման նպատակով, եթե այդ ծախսերի հատուցումը նախատեսված է ապահովագրության պայմանագրով,
- չիրապարակել ապահովադրի բանկային կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները:

11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նման համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Հավելված 1. Պատերազմի, առևանգման և օդագնացության այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին կանոնադրություն (AVN. 48 B)

Հավելված 2. Ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության ռիսկերի բացառման մասին կանոնադրություն (AVN.38A)

Հավելված 3. Օդանավի արժեքի մեջ ազդեցատների արժեքի տեսակարար կշիռների մասին

Հավելված 1

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Պատերազմի, առևանգման և օդագնացության այլ
վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին
(AVN. 48 B)**

Ապահովագրական հատուցումներ չեն կատարվում այն վնասներով, որոնք առաջացել են.

ա) պատերազմի, ագրեսիայի, հուզումների, ներխուժման, արտաքին թշնամիների ռազմական գործողությունների (անկախ նրանից թե պատերազմը հայտարարվել է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ռազմական դրության, ռազմական հեղաշրջման, իշխանությունը անօրինական զավթելու կամ այդ փորձերի հետևանքով,

բ) ցանկացած զենքի պայթյունի հետևանքով, որն առաջացնում է ատոմային կամ միջուկային քայքայում կամ համադրում (սինթեզ) կամ ցանկացած այլ համանման ռեակցիա, որն առաջացնում է ռադիոակտիվ նյութերի արտադրում (վերարտադրում),

գ) գործադուլների, անկարգությունների, քաղաքացիական հուզումների և աշխատանքային անկարգությունների, խախտումների հետևանքով,

դ) մեկ կամ ավելի մարդկանց ցանկացած գործողությունների հետևանքով, որոնք ուղղված են քաղաքական կամ ահաբեկչական նպատակների հասնելուն, անկախ այն բանից, թե այդ մարդիք համարվում են արդյոք ինքնիշխան պետությունների գործակալներ և այդ գործողությունների հետևանքով վնասը արդյոք պատճառվել է պատահականորեն կամ կանխամտածված,

ե) սպառնալիքի, նենգադուլի կամ դիվերսիայի ցանկացած ակտի հետևանքով,

զ) բռնագրավման, ազգայնացման, զավթման, կալանավորման, ազատագրկման, յուրացման, սեփականության իրավունքով կամ օգտագործման համար կամ որևէ կառավարության (քաղաքացիական, զինվորական կամ փաստացի կառավարող) կամ հասարակական կամ պետական իշխանության կարգադրությամբ կատարված բռնագրավման հետևանքով,

է) օդանավի հափշտակության կամ ցանկացած անօրինական զավթման կամ անօրինական տիրապետման հետևանքով,

ը) թռիչքի ժամանակ օդանավի կամ նրա անձնակազմի հափշտակության կամ ցանկացած անօրինական զավթման կամ անօրինական տիրապետման (նեռարյալ այդպիսի զավթման կամ տիրապետման ցանկացած փորձ) հետևանքով, որոնք ձեռնարկվել են օդանավի նավակողում գտնվող ցանկացած անձի կամ անձանց կողմից որոնք գործել են առանց Ապահովադրի համաձայնության:

Բացի դրանից, չեն հատուցվում նաև ծախսերը, որոնք առաջացել են այն դեպքերում, երբ օդանավը վերը նշված ցանկացած պատճառներով գտնվում է Ապահովադրի վերահսկողությունից դուրս:

Հավելված 2.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման
ներգործության ռիսկերի բացառման մասին
(AVN.38A)**

1. Ապահովագրական դեպքերին չեն դասվում և ապահովագրական հատուցումներ չեն կատարվում, եթե.

ա) առողջությանը (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու) կամ գույքին պատճառված որևէ վնասը առաջացել է իոնացնող ճառագայթահարման ազդեցության կամ ճառագայթային աղտոտման ուղղակի կամ անուղղակի ներգործության հետևանքով,

բ) ցանկացած տեսակի սեփականությանը հասցված վնասը, եթե այդ վնասի ուղղակի կամ անուղղակի պատճառ կամ պատճառներից մեկն է համարվում իոնացնող ճառագայթումը կամ ճառագայթահարումը որևէ աղբյուրից:

2. Ապահովագրական հատուցումը վճարվում է (սույն կանոնադրության 1-ին կետի պայմաններին համապատասխան) այն վնասների, կործանումների և ծախսերի համար, որոնց ուղղակի կամ անուղղակի պատճառ կամ պատճառներից մեկը համարվում է իոնացնող ճառագայթահարում կամ ռադիոակտիվ վարակումը որևէ ռադիոակտիվ նյութերից՝ Օդային Տրանսպորտի Միջազգային Ասոցիացիայի (INTERNATIONAL AIR TRANSPORT ASSOCIATION - IATA) կանոններին համապատասխան որպես բեռ դրանց փոխադրելու ընթացքում, իոնացնող ճառագայթահարման ազդեցության կամ ճառագայթային աղտոտման ներգործության հետևանքով, հետևյալ պայմանների պահպանումով.

ա) ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այն պահանջների նկատմամբ, եթե ցանկացած ռադիոակտիվ նյութերի փոխադրումը բավարարում է IATA-ի այն պահանջներին, որոնք վերաբերվում են օդով ռադիոակտիվ առարկաների փոխադրմանը,

բ) օդանավի խորտակման կամ վնասվածքի գծով պահանջները, սույն կանոնադրության 2-րդ կետի համաձայն, ընդունվում են այն դեպքում, եթե վարակման մակարդակը գերազանցում է ստորև բերված սանդղակով սահմանված առավելագույն թույլատրելի մակարդակը.

Ճառագայթումներ	Մակերևույթի արձանագրված ռադիոակտիվ վարակման առավելագույն թույլատրելի մակարդակը (միջինացում 300 սմ² մակերեսով)
-----------------------	---

Բետա, գամմա ճառագայթումներ և ալֆա ճառագայթումներ՝ ցածր թունավորության	նչ ավելի քան 4 Bq/cm ² (0.1 Ci/cm ²)
Մյուս բոլոր ալֆա ճառագայթումներ	նչ ավելի քան 0.4 Bq/cm ² (0.01 Ci/cm ²)

զ) ապահովագրության պայմանագիրը, որը կնքվել է սույն կանոնադրության 2-րդ կետի պայմաններով Ապահովագրողի կողմից կարող է ցանկացած ժամանակ լուծվել այդ մասին 7 օր առաջ ծանուցելով:

Հավելված 3.

Ա Ղ Յ ՈՒ Ս Ա Կ

**Օղանավի արժեքի մեջ ագրեգատների
 արժեքի տեսակարար կշիռների մասին**

բաղկացուցիչ մասերի անվանումը	երկշարժիչ ինքնաթիռներ ը	երեք շարժիչով ինքնաթիռներ	ուղղաթիռներ ը
1. Ուժային տեղակայում այդ թվում՝ ա) բոլոր շարժիչները բ) օղային պտուտակ գ) պտուտակափոխանցիչ և շարժահաղորդում	24.0 24.0	36.0 36.0	48.0 28.0 4.0 16.0
2. Սավառնակ այդ թվում՝ ա) կմախք՝ թևակենտրոնով բ) թև և մոտոմակույկ գ) պոչաթևեր դ) շասսի	60.0 30.0 15.0 9.0 6.0	50.0 25.0 13.0 8.0 4.0	40.0 30.0 - 9.0 1.0
3. Նավակողի սարքավորումներ և հանդերձում	16.0	14.0	12.0
Ընդամենը	100 տոկոս	100 տոկոս	100 տոկոս

Ծանոթություն

Աղյուսակում նշված օղանավի արժեքի նկատմամբ տոկոսներով ագրեգատների արժեքի տեսակարար կշիռների նշանակությունները համարվում են առավելագույնները՝ որևէ ագրեգատի լրիվ կործանման դեպքում ապահովադրի վնասի չափը որոշելու համար: